ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՐՏԵԼՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՀԿՈՒԼԽՈՐԶՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ (ԱՊԿԲԲ) ՄԱՍԻՆ

1938 թիվ. ԼԵՆԻՆԱԿԱՆ ՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ 1938 թիվ.

Հաստատված է Համառնկոոպգրամխորհրդի Նախագահության կողմից: Համաձայնեցված է Համառն կոոպգանձխորհրդի և Համառնկոոպսնտռմիության հետ 15-ն մայիսի 1937 թիվ.

1. ԱՊԿԲԲ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ԱՊԿԲԲ-ն հանդիսանում է արհապահովանձարկղի առորին կազմակերպությունն արտադրության մեջ, վորի ղեկավարությամբ կատարվում է ամբողջ աշխատանքը:

2. ԱՊԿԲԲ-ն կազմակերպվում է արհկոոպերացիաներում (արտելներում, ընկերություններում, արհկալխոզներում) նրա համար, վորպեսզի՝

ա) Արհկոոպերացիայի անդամների ակտիվ մասնակցությամբ, աշխատանքի փոխադարձ ապահովագրության բնագավառում անշեղորեն իրագործեն Ստալինյան հոդվածությունը մարդու—սոցիալիզմ կառուցողի մասին:

բ) Սիստեմատիկաբար բարձրացնել արհկոոպերացիայի անդամների նյութական-կենցաղային և կուլտուրական մակարդակը, հետևելով բնակարանային և սանիտարական պայմանների բարելավմանն արտադրությունում և կենցաղում, առողջապահական, սանիտարական միջոցառումների և աշխատանքի պաշտպանության ու տեխնիկայի ապահովության կանոններ անցկացնելուն, վորոնք ուղղված են հիվանդությունների և վնասվածքների թիվը քչեցնելուն:

գ) Իրագործել հոդվածությունն արհկոոպերացիայի

Հանրային գրադարան
11-288459թ

05 FEB 2018

անդամների և նրանց ընտանիքների պահանջները բավարարելու մասին, ոժանդակելով ստախանովականների և հարվածայինների շարքերի աճմանը, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուն և արհեստագործական ու անտառային կոոպերացիայի պլանները կատարելուն:

դ) Պայքարել բյուրոկրատական այլանդակություններին դեմ ապահովագրվածների սպասարկման գործում և կազմակերպել մասսայական գործոն վերահսկողությունը ապահովագրական աշխատանքի բոլոր բնագավառներում՝ ժողովրդի թշնամիների, ժուլիկների և խաբեբաների կողմից փոխադարձ ապահովագրության միջոցների վատնումը կանխելու նպատակով:

2. ԱՊԿԲԲ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Աշխատանքի պաշտպանության և կենցաղի բարելավման բյուրոն (ԱՊԿԲԲ-ն) կազմակերպվում է բոլոր արհկոոպերացիաներում, վորոնք ունեն 25-ից վոչ պակաս արհկոոպերացիայի անդամներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—25-ից պակաս անդամ ունեցող Արհկոոպերատիվներում ընտրվում են ապահովագրական լիազորներ, վորոնք կատարում են իրենց աշխատանքները՝ «Ապահովագրական լիազորի մասին կանոնադրություն» գրքույկի հիման վրա:

2. ԱՊԿԲԲ-ն ընտրվում է արհկոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամանակով:

3. Ընտրող ընդհանուր ժողովները հավաքվում են իրավազոր այն դեպքում, յերբ հավաքվածները տվյալ արհկոոպերատիվի բոլոր անդամների ընդհանուր թվի 2/3-ից պակաս չեն:

4. ԱՊԿԲԲ-ի կազմի մեջ ընտրվում են 3-ից մինչև 11 մարդ, նայած արհկոոպերատիվի անդամների ընդհանուր թվին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԱՊԿԲԲ-ի առանձին անդամների դուրս գալու դեպքում կատարվում են ԱՊԿ-

ԲԲ-ի անդամների լրացուցիչ ընտրություններ, արհ կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովում։

5. ԱՊԿԲԲ-ի վրա դրվող բոլոր խնդիրներն անցկացնելու համար յուրաքանչյուր արհկոոպերատիվում ԱՊԿԲԲ-ին ոգնելու համար, ընտրվում են ապահովագրական պատգամավորներ։

6. Ապահովագրական պատգամավորներն ընտրվում են այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր արտադրական բընագավառ՝ ցեխ, բաժանմունք և տվյալ արհկոոպերատիվի բոլոր հերթափոխություններն ապահովված լինեն ապահովագրական պատգամավորներով։ Մեծ քանակով աշխատողներ ունեցող ցեխերում արհկոոպերատիվի ամեն մի 20 անդամից ընտրվում է մեկ ապահովագրական պատգամավոր։

7. Ապահովագրական պատգամավորները յուրաքանչյուր յեռամսյակում հաշվետու յեն լինում իրենց աշխատանքի մասին ԱՊԿԲԲ-ի առաջ և արհկոոպերատիվի անդամների այն խմբի առաջ, վորը սպասարկվում է ապահովագրական պատգամավորի կողմից։

8. ԱՊԿԲԲ-ն բոլոր ապահովագրական պատգամավորներին բաշխում է ըստ ԱՊԿԲԲ-ի սեկցիաների, կամավոր սկզբունքի հիման վրա։

9. ԱՊԿԲԲ-ի ամբողջ աշխատանքը բաշխվում է՝

ա) Աշխատանքի պաշտպանության.

բ) Առողջապահության և պրոֆիլակտիկայի.

գ) Կենցաղային սպասարկման.

դ) Ֆինանսական.

Սեկցիաների մեջ։

10. Աշխատանքի պաշտպանության սեկցիային կցվում են տվյալ արհկոոպերատիվի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի ապահովության բոլոր հասարակական տեսուչները (այդ թվում և յերիտասարդության հասարակական տեսուչները), վորոնք ընտրվում և կատարում են իրենց աշխատանքն արհեստագործական կոոպերացիայի սիստեմում, հասարակական տեսուչների մասին կանոնադրության հիման վրա։ Տվյալ խմբի ապահովագրական պատգամավորներն ավելացվում են հասարակական տեսուչներին, նրանց ոգնելու համար։

11. ԱՊԿԲԲ-ի նախագահն ընտրվում է արհկոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովում։

ԱՊԿԲԲ-ի նախագահն իրագործում է բոլոր սեկցիաների ընդհանուր ղեկավարությունը, սեկցիաների ղեկավարների միջոցով և անմիջականորեն ինքը գլխավորում և ղեկավարում է ԱՊԿԲԲ-ի սեկցիաներից մեկը և պատասխանատու յե նախահաշվով նախատեսված միջոցների ճիշտ գործադրման համար։

12. Սեկցիաների ղեկավարներն ընտրվում են ԱՊԿԲԲ-ի նիստում ԱՊԿԲԲ-ի անդամներից։

ԱՊԿԲԲ-ի այն անդամը, վորը ղեկավարում է աշխատանքի պաշտպանության սեկցիան, միաժամանակ և արհկոոպերատիվում աշխատանքի պաշտպանության հասարակական ավագ տեսուչն է հանդիսանում։

13. ԱՊԿԲԲ-ն հաշվետու յե արհկոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովին և արհապահովանձարկղին և պարտավոր է կանոնավոր կերպով, վոչ ուշ քան մեկ անգամ, յուրաքանչյուր յեռամսյակում, իր աշխատանքի մասին հաշիվ տալ արհկոոպերատիվի անդամներին և արհապահովանձարկղին։

14. Աշխատանքները, համաձայնեցրված կերպով կատարելու, նաև վարչական կարգադրությունները, պահանջվող միջոցառումներն անցկացնելու համար, ԱՊԿԲԲ-ն անմիջականորեն կապվում է արհկոոպերատիվի վարչության հետ, մտցնելով վարչության նիստերին և արհկոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովներին, փոխադարձ ապահովագրության աշխատանքին վերաբերվող հարցեր և առաջարկություններ։

15. ԱՊԿԲԲ-ի նախագահի հանելը արտադրական աշխատանքից կամ այլ աշխատանքի փոխադրելը, նաև նրան յերկարատև գործուղղում տալը կարող են կատարվել միմիայն համապատասխան արհապահովանձարկղի հետ համաձայնեցնելուց հետո։

3. ԱՊԿԲԲ-Ի ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԵԿՑԻԱՆ

1. Մասնակցում է արհկոոպերատիվի անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության բնագավառում ներքին կարգավորման կանոնների մշակմանը։

2. Իրագործում է վերահսկողությունն արհկոոպերացիայի սիստեմի համար՝ անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության օրենքների, վորոշումների և կարգադրությունների լրիվ և ժամանակին կյանքի մեջ իրագործելու վրա։

3. Իրագործում է վերահսկողությունը գեռահասների և աշակերտների աշխատանքի պաշտպանությանը վերաբերվող օրենքների կատարման վրա։

4. Սիստեմատիկորեն հետևում է, վորպեսզի մեքենաների վտանգավոր մասերը կանոնավոր կերպով լինեն պատած, կանոնավոր վիճակում լինեն հատուցները, ռեգուլատորները, գործիքները և ողափոխության տեղակոցումները։

5. Հետևում է հատկազգեստի, հատկակոշիկների և պաշտոնական հարմարանքների ճիշտ և ժամանակին դուրս տալուն, նաև վերջինների, ժամանակին նորոգելուն, լվանալուն և ախտահանելուն։

6. Պայքարում է վնասվածության դեմ, հսկում է, վորպեսզի կատարվի վնասվածության պատճառների ճիշտ հաշվառումը, քննությունն ու ուսումնասիրությունը և միջոցներ և ձեռք առնում նրանց վերացնելու համար։

7. Կազմակերպում է առաջարկների ընդունման գործը, աշխատանքի պայմանների առողջացման և անվտանգության տեխնիկայի բարելավման շուրջը, ձգտելով իրացնել այն։

8. Անց է կացնում արհկոոպերատիվի անդամների մեջ բացատրական աշխատանք՝ անվտանգության տեխնիկայի և արհեստագործական առողջապահության կանոնների մասին, այդ աշխատանքին մասնակից դարձնելով արհկոոպերատիվի ճարտարապետա-տեխնիկական անձնակազմին և արհապահովանձարկղի աշխատակիցներին և վերահսկում է արհկոոպերատիվի անդամների կողմից աշխատանքի անվտանգության մեթոդների կիրառմանը։

9. Մասնակցում է աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի համար յեղած հատկացումների պլանը կազմելու և մշակելու մեջ և հետևում է, վորպեսզի այդ նպատակներին ծառայող հատկացումները լրիվ, ժամանակին և նպատակահարմար կերպով ոգտագործվեն։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՅԵՎ ԱԽՏԱԿԱՆԽՄԱՆ ՍԵԿՑԻԱՆ

1. Իրագործում է վերահսկողությունն արհկոոպերատիվի անդամների և նրանց ընտանիքի անդամների բժշկական սպասարկման դրվածքի վրա։

2. Պայքարում է հիվանդացումների դեմ, մշտական վերահսկողություն ունենալով ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանում, արձակուրդները կանոնավոր տալու և ոգտագործելու վրա և ցեխերի, արհեստանոցների, բանվորական վայրերի և արհկոոպերատիվի կենցաղային հիմնարկները կանոնավոր և առողջապահական վիճակում պահելու համար։

3. Կազմակերպում է արհկոոպերատիվի անդամների մեջ առողջապահական-լուսավորական աշխատանք, առողջապահություն և կուլտուրա ամրացնելու համար՝ արտա-

դրության մեջ և արհկոոպերատիվի անդամների կենցաղում։

4. Ընկերական վերահսկողություն է տանում տանը՝ հիվանդների վրա, ցույց տալով նրանց անհրաժեշտ ուշադրություն, ստուգում է բժշկի կողմից հատատված ռեժիմի պահպանումը, հայտնաբերելով հիվանդության սիմուլյացիայի (կեղծ հիվանդ ձևանալը) դեպքերը և պայքարելով սիմուլյանտների և արտադրության կազմալուծիչների դեմ։

5. Հետևում է, վորպեսզի բոլոր ցեխերում լինեն առաջին ուշադրության դեղարկղներ և հոգ է տանում նրանց դեղերով և վիրակապական նյութերով լրացնելու մասին։

6. Աջակցում է նախազգուշական միջոցառումներ անցկացնելու վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու գործում և հետևում է ընդհանուր ուղտագործման տեղերի կանոնավոր կերպով ախտահանմանը։

7. Մասնակցություն է ունենում արտադրության մեջ ֆիզկուլտուրա կազմակերպելու հարցում։

8. Արհազգանձարկղի հանձնարարությամբ մասնակցում է արհկոոպերատիվի անդամների ընտրության հարցում նրանց սանատորիական բուժման և բուժային սընընդի ուղարկելիս։

Արհկոոպերատիվի վարչության հետ միասին նշում է թեկնածուներ՝ հանգստյան տներ, սանատորիաներ և եքսկուրսիաներ ուղարկելու համար։

Իրագործում է վերահսկողությունը հանգստյան տների, սանատորիաների և եքսկուրսիաների ուղեգրերի ճիշտ և ժամանակին ուղտագործման վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հանգստյան տների, սանատորիաների և եքսկուրսիաների համար նշված թեկնածուների հաստատումը կատարվում է արհկոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի կողմից։

9. Արհկոոպերատիվի անդամներին պարզաբանում է բժշկական և խստահանական հիմնարկներից ուղտվելու կարգը։

10. Կազմակերպում է առաջին բժշկական ուշադրությունը հասցնելու գործը, արտադրության մեջ։

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍԵԿՑԻԱ

1. Արհկոոպերատիվի վարչության հետ միատեղ նշում է արհկոոպերատիվի անդամների յերեխաներին մսուրներով, մանկապարտեզներով, պիոներական ճամբարներով, նաև մանկական այլ առողջապահական միջոցառումներով սպասարկելու ծրագիրը։

2. Արհկոոպերատիվի վարչության հետ միասին բաշխում է ուղեգրերը, արհապահովանձարկղի և այլ գերատեսչությունների մանկական հիմնարկների մեջ և պատասխանատու է ուղեգրերի ճիշտ ուղտագործման համար։

3. Հետևում է աշխատանքի դրվածքին, մանկական հիմնարկներում, լայնորեն ներգրավելով ծնողներին մանկական հիմնարկներում, աշխատանքի վորակը բարձրացնելու նպատակով զանազան միջոցառումներ անցկացնելու գործի մեջ։

4. Աջակցում է մանկական հիմնարկների նյութական բազայի ամրացմանը և հետևում է, վոր մանկական հիմնարկներն ապահովելու համար անհրաժեշտ միջոցները, ծնողներից և արհկոոպերատիվի վարչությունից, կանոնավոր և ժամանակին գանձվեն։

5. Աջակցում է մանկավարժական պրոպագանդայի դրվածքին և այն անցկացնելուն՝ արհկոոպերատիվի անդամների մեջ։

6. Մասնակցում է արհկոոպերատիվի վարչության կողմից՝ ճաշարանների, բուֆետների, հանրակացարանների, բաղնիքների կազմակերպման վերաբերյալ միջոցառումների նախագծի մշակման հարցում և հետևում է նը-

բանց աշխատանքի դրվածքին։

7. Անց է կացնում արհկոոպերատիվի անդամների կենցաղային պայմանների հետազոտություններ։

8. Հետևում է բնակարանային և առողջապահական պայմանների բարելավմանը և արհապահովանձարկղի կողմից բաց թողնված միջոցների ճիշտ և լրիվ ոգտագործմանը։

9. Կենցաղի բարելավման ֆոնդի (ԿԲՖ) միջոցների բաշխումը կատարվում է արտելի վարչության կողմից ԱՊԿԲԲ-ի հետ միասին և հաստատվում է արհկոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի կողմից։

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ Է

1. Սիստեմատիկ վերահսկողությունն ապահովագրական մուծումների ճիշտ հաշվումների և այն ժամանակին վճարելու վրա, իրագործում է աշխատավարձի թաքնված ձևերի հայտնաբերումը, պայքարում է ապահովագրական մուծումների բնագավառում պարտքաբեռնվածության դեմ՝ սիստեմատիկ կերպով հսկում է արհապահովանձարկղի հաշվին վճարված հաշվարկային տեղեկագրերի և փաստաթղթերի արհապահովանձարկղի (ապահկետ) ժամանակին ներկայանալու վրա։

2. Նախնական (մինչ վճարումը) ստուգումն արհկոոպերատիվի վարչության կողմից հիվանդության թերթիկներում և այլ փաստաթղթերում նպաստ կամ կենսաթոշակ ստանալու համար նշված տեղեկանքների ճշտությունը՝ ստաժի, աշխատավարձի, ստախանովյան աշխատանքի, հարվածայնության մասին և վերահսկողություն ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանում տրվելիք նպաստների և կենսաթոշակների լրացուցիչ ձևերի ճիշտ և ժամանակին հաշիվ կատարելու վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Արհապահովանձարկղի հաշվին վճարվող դրամական նպաստներին և կենսաթոշակներին վերաբերվող բոլոր փաստաթղթերն անպայմանորեն ստուգվում և ստորագրվում են միայն վճարումը ԱՊԿԲԲ-ի նախագահի կողմից։

3. Հսկողություն՝ արհկոոպերատիվի վարչության և ծնողների կողմից, մանկական հիմնարկները պահպանելու համար հատկացված միջոցները լրիվ և ժամանակին վճարելու վրա։

4. ԱՊԿԲԲ-ի բյուջեյի և նախահաշվի մշակումը արհկոոպերատիվի անդամների շրջանում և վերահսկողություն նրանց կատարման վրա։

5. Ֆին սեկցիան հետևում է, որպեսզի արհկոոպերատիվի անդամներն ուսումնասիրեն բոլոր ձևերի դրամական նպաստների և կենսաթոշակների վճարումների և արհապահովագրական մուծումների գանձումների կանոնները։

4. ԱՊԿԲԲ-Ի ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. ԱՊԿԲԲ-ի միջոցները կազմվում են՝

ա) Տվյալ արհկոոպերատիվի համար արհապահովանձարկղի կողմից հաստատված, ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցի լիմիտի իջեցումից ազատված գումարների 75 տոկոսից (տես հավելվածը)։

բ) Տվյալ արհկոոպերատիվի արհապահովանձարկղին հատկացված ռեգրեսիվ հարկերի ամբողջ գումարի 5 տոկոսից։

գ) Ընկերական վերահսկողության նպատակով շրջելու՝ ծախքերի համար գանձարկղի կողմից բաց թողած միջոցներից։

2. 1-ին կետում (ա, բ, գ,) նշված միջոցները ծախսվում են համաձայն այն նախահաշիվների, որոնք հաստատվում են արհապահովանձարկղի կողմից, յուրաքանչյուր յեռամսյակում, ախտահանիչ, կենցաղային միջոցառումների համար և յերեխաների սպասարկման համար՝ արհկոոպերատիվի նկատմամբ նախատեսված միջոցառումների ընդհանուր պլանից դուրս նաև ԱՊԿԲԲ-ի լավագույն ակտիվիստներին պարգևատրելու համար։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԾԱԽՔԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ ԳՈՅԱՑԱԾ ՏՆՏԵՍՈՒՄԻ 75%-Ի ՀԱՇՎԵԼԸ ՅԵՎ ՓՈԽԱՆՑԵԼԸ Ս. Պ. Կ. Բ. Բ.-ԻՆ

1. Ժամանակավոր անաշխատունակության ժամանակամիջոցին վերաբերվող ծախքերից տնտեսած գումարների այն հատկացումները, որոնք անցնում են ԱՊԿԲԲ-ին ի տնօրինություն, կատարվում են այն դեպքում միայն, երբ գումարներից գոյացած տնտեսման հետ միաժամանակ, փաստորեն արտադրության մեջ զբաղված յուրաքանչյուր ապահովագրվածի համար տեղի չ ունենում իջեցում, ժամանակավոր անաշխատունակության որերի պլանի դիմաց. տնտեսված գումարի հաշվումը կատարվում է ըստ իջեցրած որերի քանակի, բազմապատկած պլանավորած միջին որեկան նպաստով։ Իջեցման որերի քանակը վորոշվում է պլանի կատարման հաշվառքով ըստ արտադրության մեջ զբաղված անձերի։

2. Տնտեսած գումարների հաշիվը կատարվում է յեռամսյակներով։

ՕՐԻՆԱԿ. Ըստ տվյալ արտելի ունենք յեռամսյակում կատարած պլանի հետևյալ ցուցանիշները (տես ապյուսակը եջ 12)։

3. Յեռամսյակում վորոշված գումարը, որոնք անցնում է տվյալ արհապահ գանձարկղի ԱՊԿԲԲ-ներին, անց և կացնում ըստ 572-րդ հաշվի պարտքի (դեբետի) և ըստ 371-րդ հաշվի պահանջին (կրեդիտի), մոտալուտ վճարումներ։

3 Տնտեսած գումարի հանձնումը ԱՊԿԲԲ-ներին կատարվում են արապահգանձարկղի հաշվետվությունը վերին օրգանների կողմից հաստատելուց հետո։ Հանձնվող գումարները դուրս են գրվում մոտալուտ վճարումների № 371 հաշվին։

	Պլան	Կատարում
Աշխատողների միջյեռամսյակային թիվը	250	220
Ժամանակավոր անաշխատունակության որերի թիվը	2500	2160
Նույնը մեկ ապահովագրվածի համար	10	9,8
Միջին որական նպաստը	4	4ռ.38կ.
Ծախքերի գումարն ըստ ժամանակավոր անաշխատունակության	10000	9288
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎՈՒՄԸ		
Ժամանակավոր անաշխատունակության որերի թիվը (10—9,8) 220	44 որ	—
Մեկ որվա միջին վճարը	4 ռ.	—
Խնայողության գումարը (4.44) . . .	176 ռ.	—
Պարգևատրման գումար (176,0,75) .	132 ռ.	—

Ռուսերենից թարգմ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0928230

10 ИЮЛ. 1938 365

II
28845

Գրքից № 6528, Պատվ. № 917, Տիրաժ 300 արիցակ